Առաջարկ
ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն առաջարկում ենք հանել շրջանառությունից հետևյալ պատճառաբանությամբ.
Սույն թվականի մայիսի 16-17-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից քննարկման է ներկայացվել ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ, որում առաջարկվել են հայեցակարգային փոփոխություններ և լրացումներ: Արդյունքում որոշվել էր շարունակական դարձնել նախագծի շուրջ քննարկումները և ներկայացնել համալիր փաստաթուղթ մինչև 2020թ., որի նպատակն է՝ համապատասխանեցնել ներկայիս օրենսգիրքը Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին, ինչպես նաև լուծել իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրները:
Ստացվում է, որ ՀՀ գործադիր իշխանության համակարգում գործող երկու նախարարություններ ներկայացնում են աշխատանքային հարաբերությունները կարգավորող՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների տարբեր նախագծեր, ինչն անթույլատրելի է, քանի որ նման իրավիճակներում հնարավոր չէ բացառել հակասությունների և բացթողումների հավանականությունը: Այս առումով հարկ է նշել, որ պետությունը պետք է առաջնորդվի միևնույն ոլորտը բարելավեուն ուղղված մեկ տեսլական ձևավորելու գաղափարախոսությամբ և այս տեսանկյունից ողջամիտ չէ շահագրգիռ կառույցների կողմից ներկայացված երկու նախագծերի վերաբերյալ ներկայացնել դիտարկումներ և մեկնաբանություններ:
Վերոնշյալ հանգամանքից ելնելով՝ առաջարկում ենք ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը քննարկման ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից արդեն իսկ ներկայացված և որոշակի քննարկումներ անցած նախագծի շրջանակներում:

03.07.2019

Հայաստան, Երևան, 0002, Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 569589, 569689 ● Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am ● www.transparency.am